



ԲԱՇՏԱՎԱԼԵԴ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 20 .

1854

ՀՈՆՏԵՄՔԵՐԻ 15 .

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հոգ մի ըներ այն խելացի տղայ է , իր բանը գիտէ :

() Ե մը քաղքի մը մէջ ճամբան եր թալու ատեն՝ տեսայ որ մարդ մը բան մը ըսելով մէկ տան մը դռնէն ներս կը մտնէր : Խրթ զբան դիմացը հասայ , լսեցի որ ներսէն մէկը կը կանչէր , Հոգ մի ըներ այն խելացի տղայ է , իր բանը գիտէ . մարդն ալ սկսաւ զլուխը շարժելով խօսք մը ըսել : Խս այն մարդուն զրուխ շարժելէն , և մէկալին այն կանչելով ըսած խօսքէն գուշակեցի որ տըզու մը հայր ու մայր են անոնք , և իրենց տղուն վրայ վէճ է ըրածնին . չի կը ցայ զիս բռնել , մօտեցայ դրան . Պարոն , ըսի , ընկերողդ ըսած խօսքին վրայ մի զարմանար . այս աշխարհքիս մէջ ամէն տեղին սովորութիւնն է . մայրերը ամէնքն ալ իրենց երկրին մէջ՝ մէկ հատիկ գեղեցիկ և մէկ հատիկ խելա-

ցի տղաքներ աշխարհք կը բերէն . բայց զարմանքն այն է՝ որ աշխարհքիս մէջ մարդկանց խիստ շատերը տգեղ և անխելք են . խակ զարմանքէն աւելի ցաւալին այն է՝ որ մայրերը տղաքնիս գեղեցիկ , խելացի է ըսելով . խրատելու կը թելու տեղ , իրենք բերաննին բաց զմայլած տղոց ըրածներուն վրայ և խօսքերուն վրայ , իրենք տղոցը կամացը կը հետևին . և ասանկով տղաքը անխելք և անկիրթ ըլլալէն ետե , այն պիսի մայրերն ալ իրենց քիչ մը ունեցած խելքն ալ կը կարսընցընեն տղոցը խելաց յարմարելով : Պայս իմ խօսքերս որ ժպտելով մը կ'ըսէի՝ կէս կատակ բոլորը իրաւ , տղուն մայրը լսելով , մօտեցաւ դրան , ու ինձի դարձաւ , Հրամանքդ թողութիւն կ'ընես , պարոն , ը-

սաւ , իմտղաս այն սովորական տղացմէ չէ . ահա հայրն ալ կը վկայէ , և տես նողները ամէնքն ալ կ'ըսեն որ կարգէ դուրս բան մըն է իմ տղաս : Ի՞յսպէս ըսելով զիս վեր հրամցուց՝ որ երթամ տղան տեսնեմ . ես ալ որ արդէն կ'ուզէի հասկըցընել այս սովորական ծնողաց տղայ մեծցընելու ձամբուն անկարգ ըլլալը , որովհետեւ ես ալ երկար ատեն դպրոցի կրթութեան մէջ մեծցած էի , սիրով յանձն առի ու մտայ ներս : Ա եր ելելու ատեն , տեսայ որ տղան վար կը վազէր . մայրը , (Կննիկ , ըսաւ , մեզի հիւր եկաւ այս պարոնը , եկո բարեւ տուր : Տղան մտիկ ըրբաւ . դլուխը կախած շիտակ պարտէզ վազեց : Ո՞յցը ծիծաղէլով , ո՞հ , ըսաւ , շատ տաք բնութիւն ունի , բայց շատ ալ խելացի է . միտքը բան մը որ զնէ , անպատճառ պիտի կատարէ . ինչ կ'ընէ ըներ ձամբայ մը կը գտնէ մտքի զրածն առաջ տանելու : Ի՞յսպէս ըսելով մը տանք սենեակը , ուր որ նստած էր ուրիշ պարոն մըն ալ : Պատասխանեցի . Ի՞յդ աղէկ բան է , խաթուն , մտքին զրածը կատարել , խօսք մտիկ ընել , մարդ չի սեպել , մարդկութիւն չի գիտնալ , հնազանդութիւն ինչ ըսել է չի հասկընալ : — Պատասխանեց . Հրամանքը ծուռ մտքերու կը տանիս . տղայական աշխայժը զինքը քիչ մը անհնազանդ կ'երկցընէ . բայց այս իմ (Կննիկիս խօսք մտիկ ընելը ես կը տեսնեմ որ խելացիութենէն առաջ կու գայ . որովհետեւ իր խելքովը կը հասկընայ թէ որ բանը պէտք է ընել և որը ընել : Շատ անգամ պատահէր է որ ես իրեն բան մը կ'ապսպըրեմ , բայց (Կննիկս իմ ըսածիս տեղ ուրիշ խելքովը բան մը կ'ընէ՝ որ ես ալ կը հաւանիմ : Արբեմն սիսալ բան մ'ալ կ'ընէ նէ , գեռ տղայ է . պէտք է քիչ մ'ալ ազք գոցել : — Կ'նչ կ'ըսես , խաթուն , տղոց կրթութեան վրայ ազք գոցել կ'ըլլայ , մարդկային բնութիւնը այնպէս ապականած է՝ որ խելացի ծընողքներ տղու մը կրթութեան համար երկու ազքն ալ բաւական չեն սեպեր , այլ կը ջանան որ եթէ կարելի է չորս ,

ութը ազք գործածեն . հրամանքդ միայն երկուքն ալ հերիք կը սեպես , և երեւմն երկուքն ալ աւելորդ կը համարիս , ու գոցել կ'ուզէս : Հին ատենի մեր թագաւորները տղոց բարոյական կը թութեան համար չորս այլ և այլ խելացի վարպետներ քովկերնին կը դնէին , որոնց մէկը աստուածատութիւն կը սովորեցնէր , մէկալը բարեխաւութիւն , մէկն ալ խմաստութիւն . և չորրորդն արիութիւն . և հիմայ հրամանքդ տղադինքիր գլխուն թողուլը պարտք կը սեպես : Ի՞յա այդպէս մտածելով մեր ազգին ծնողքները , ազգերնիս այսպէս խեղչ անկրթութեան մէջ մնացեր , տըղաքը իրենց խելքին հաւած մեծնալով ազգը անկարգութեան ծովուն մէջ խղդել կը ջանան :

Ի՞յս խօսքերուս վրայ , այն նստած պարոնը , որ ինքն ալ տղոց տէր եր , ինձի իրաւունք տալով սկսաւ պատմել թէ ինքը ինչպէս խիստ կը պահէ իր տղաքը , խելօք , հնազանդ . կ'ըսէր թէ տանը մէջ ինը տղայ ունի , բայց այնպէս խելօք կը պահէ զանոնք , որ կարծես թէ տունը մարդ չի կայ . ամէն մէկը տարիքնին առած , հանդարտած կատարեալ մարդու պէս կը վարուին : Ի՞յնպիսի տղայական խաղեր , վազվզել , կանչուըստել ամենեւին չեն գիտեր . և այնպէս պարկեշտ , որ զրսի մարդու հետ կը քաշուին խօսելու . իրարու հետ միայն կը խօսին , և այն ալ ցած ձախով . իմ դիմացս ալ , կ'ըսէր , խիստ քիչ կը խօսին : — Կ'նդիկէն խաթունը խօսքը կտրեց . Կ'նանկ փայտի պէս տղաք ամենեւին չեմ սիրել , ըսաւ . տղաքը պէտք է որ իրենց արեան տաքութեանը յարմար վարմունք ունենան . և երբ մեծնան , տարիքնին առնեն , ինքիրենց կը հանդարտին : Լյս մէկ աղէկ նմանութիւն մը լսեր եմ մէկ խելացի մարդէ մը՝ որ մոքէս չելլեր : Ո՞եկ նոր բուսած ծառ մը և մէկ մեծցած ծառ մը իրարու ինչպէս կը համեմատին , այնպէս ալ մարդիկ իրենց տղոցը հետ . մեծ ծառը հաստատուն շիտակ կը կենայ , սաստիկ հովերէն հազիւ կը շարժի . բայց նոր

բուսածը մէկ պղտիկ հովէ մը կը շարժի ու կը շարժի . բայց քանի որ մեծնայ հաստընայ , ինքիրեն շարժմունքն ալ կը քիչնայ , հողուն մէջ արմատն ալ կ'ամրանայ : Բայց թէ որ պղտիկուց թող շիտաս որ ծառին հով դաշի , ու անշարժ մեծցընես , ետքը մեծցած ատենը արմատը տկար մնալով մէկ սաստիկ հով մը իրեն դաշելուն պէս , արմատէն կ'ելէ , կը կործանի :

Ի՞ն ատենը պարոնը քիչ մը նեղանալով , լիյաթուն , ըստ , այդ ըստածիդ ներհակ ես շատ խելացի մարդիկներէ լսեր եմ՝ թէ նոր բուսած տունկի մը քով թէ որ նեցուկ մը չի դնես , ինքիրեն մնալով ծուռ կը մեծնայ , և կամ հովէն կը կոտրի . վերջապէս աղէկ ծառ ըլլար :

Լա այսչափը մտիկ ընելէն ետքը տեսնելով որ երկուքին ըրածն ալ սխալ ձամբայ է և օրինակներն ալիրենց ուղածին պէս մեկնելով ծուռ ձամբուն մէջ կը հաստատուին , երկուքին խօսքն ալ կտրեցի ըսելով . Երկուքնիդ ալ իրաւունք ունիք , և երկուքներնուգ ալ միտքերնիդ և ջանքերնիդ աղէկ ընելէ . և երկուքներնուգ բերած օրինակներն ալ աղէկ օրինակներ են . բայց գիտոցէք որ երկուքնիդ ալ պիտի ցաւիք այդ կեր պերով տղաքնիդ կը թէ ընուգ համար : Բայց այս բանիս վրայ ուրախ եմ որ երկուքնիդ ալ մէյմէկ օրինակ մատքերնիդ պահէր էք , անոր հետևելու համար . որ ըսելէ թէ ես ալ հիմայ եթէ օրինակով մը խօսիմ , այն իմ բերած օրինակս ալ մատքերնիդ պահէլով՝ ձեր տղոցը շիտակ կը թութեան ձամբով պիտի առաջնորդէք : Երաւ է թէ ծառը քանի որ պղտիկ է դիւրաշարժ է . իրաւ է գարձեալ որ պղտի ծառը նեցուկ պէտք է ունենայ : Բայց ինչպէս որ պղտի ծառ ուր պէտք է շարժի ըսելով ինքիրեն թողուս , սաստիկ հովէն կը վնասուի , այս պէս ալ հովէն զգուշանալ պէտք է ըսելով , նեցուկ դնելը եթէ բաւական չի սեպէս ու հովէն չի վնասուելու համար գոց տեղ պահէս , կը ըստնայ : Իսոնց նման տղան ալ եթէ բուղութին իր կա-

մացը թողուս՝ կ'անպիտանանայ . և ընդհակառակն եթէ սաստիկ ալ սխմես , նոյնպէս կ'աւրուի :

Լա ձեզի հիմայ մարդուս կենացը աւելի նման մէկ ուրիշ օրինակ մը ըսեմ , մտքերնիդ պահէցէք , ու ըստ այնմ ջանացէք կը թէ լու տղաքնիդ , և ապահով եղէք որ շիտակ ձամբով կ'ըլլայ տուած կը թութիւննիդ : Արդուս կեանքը կը նմանի մէկ տարուան ընթացքին իր ըրս եղանակովը . գարնան սկիզբը տարին կը ծնանի , ամառն ու աշունը առաջ կ'երթայ և ձմեռը կը ծերանայ կը մեռնի . իսկ տունկերուն , բոյսերուն , ծառերուն կամացնալը և չորնալը տարւոյն գործքերն են : Այդ ինչ օրէնքով որ կը սկսի տարին և կը լմբնայ , մարդուս կեանքն ալ անանկ պէտք է որ սկսի ու առաջ երթայ : Ծղադ աշխարհէք եկաւ . միտքդ գիր թէ գարուն սկսաւ . ինչ որ գարնան կ'ընէն երկրագործները որ տարին աղէկ և բարեբեր ըլլայ՝ որ կարենան վայելել , դու ալ քու տղուդ այնպէս պէտք է որ ընես : Եախ կը սկսին հողերը կակղցընել , շտկել , աղէկ պարարտութիւն մէջը դնել , որ ցանելու հունտերնին ուժով և արդիւնաբեր ըլլայ . դու ալ կը սկսիս տղադ հոգալ , կերցնել , հագուեցընել , հարկաւոր գեղերն ու դարմաններն ընել , աղէկ սրնունդ տալ հարազատ կաթով , և այն . ինչուան որ տղուն մնոաց կարողութիւնը բացուի , իր սրտին մէջ ցանած հունտերդ կարենայ բուսցընել , այսինքն ամէն տեսակ ազգարարութիւններդ հասկրնալ ու ՚ի գործ դնել : Կետինը շտկելէն ետև կը սկսին առաջ կամուխ ցանելու հունտերը սփուել . ետքը հետզէտէ կարգաւ , և ատենին ջուր տալ իրիկուընէ իրիկուն , չէ թէ խելքը փրչած ատեն , արեւը վրանին : Կսոր նման տղուն սրտին և մնաց մէջ պէտք է որ սկսիս ցանել աղէկ առաքինութեանց սկզբունքներ , իր կամքը առաջ չի տանիլ , հնազանգ ըլլալ , ատենին կերակուր առնել , չէ թէ ամէն ուղած ատենը . և ատոնք պէտք է սկսիլ վեց ամսուան եղած չեղած : Ետքը երբ կը

սկսին հօւնտերը բուանիլ, հետերնին խնդիրն գէշխոտեր ալ կը սկսին բուանիլ, ան ատենը պարտիզանը կը սկսի ամէն օր այն խոտերը հանել որ հօւնտերուն հետ մէկտեղ չի մեծնան ու տունկերը չաւրեն, չի խղդեն : Այս պէս ալ դու ըրէ . երբ տղուն ձանաչմունքը կը սկսի բացուիլ, կը սկսի ասուզել, ան մերժել, քու սովորեցուցածներուդ հետ մէկտեղ կամապաշտութեան, կամակորութեան, անձնափրութեան և ուրիշ կրքերուն նշաններ երեցրնել, ջանա որ այն կրքերը սրտէն փրցընես հանես, ամէն մէկ կրքին իրէն յարմար ձամբաներ գործածելով : Այս տունկերը քանի որ պղտիկ են, որպէս զի գէշ հովերէն չի վնասուին, պարտիզանը արգելք կը դնէ, կը պատրսպարէ, և ընդհանրապէս կը զգուշանայ որ գէշ հովերու դէմ ըլլայ պարտիզին դիրքը : Իսուն ալ պէտք է ջանաս զգուշանաս որ տղադ մինակ չի մնայ, անկարգ չի ձանցած մարդիկներու ձեռք չի թողուս զինքը, որ չար օրինակներով չաւրուի : Ո՞եկ կողմանէ ալ ջուր կուտայ, կը հոգայ, աւելորդ ձիւղերը կը կտրտէ . մէկ խօսքով գիշեր ցորեկ կը նայի կը դիտէ որ առանց վնասուելու մեծնան : Այսպէս ալ դու պէտք է որ ընես . խրատը, յորդորը պակաս ընես . և գէշ սովորութիւնները վրան չի հաստատուելու համար երբեմն պղտի պատիժներով, սիրտը ցաւցընելով զան զրդես և չի թողուս որ անխրատ, ինքնազլուխ մեծնայ :

Խակ երբ ատենը կու գայ, կը սկսին ծաղկիլ տունկերը, պարտիզանն ալ տեսնելով որ իր ըրած զգուշութիւններով տունկերն աղէկ առաջ եկան, կը նայի վրանին ու կուրախանայ . մէկ կողմանէ ալ աւելի վախնալով որ ըլլայ թէ գէշ հովէ մը ծաղիկները զարնուին, կամ ձձիներէն ուտուին, ձեռքէն եկած խնամքը կը ցուցընէ . և տգէտ կամ օտար մարգու հաւտար, որ ըլլայ թէ տգիտութեամբ կամ անչուպութեամբ վնասէ տունկին : Այսպէս ալ ամառը ինչուան աշուն ջուր տալէն չի դաշտիր ե-

դողերու դէմ պահպանութիւն կ'ընէ, ինչուան որ պտուղները հասուննան ու ըստ ժամանակին ժողովէ :

Այս մշակին ըրածը իր պարտիզին տունկերուն վրայ, պէտք է որ ընէ մէկ ծնողք մը իր տղոցը վրայ . որչափ որ կ'ուրախանայ տղուն մեծնալուն առաջ գալուն վրայ, այնչափ աւելի հոգը և խնամքը աւելցրնելու է, ամենևին թող չի տալով որ ինքնազլուխ իր կամքը առաջ տանիլ սովորի . ըլլայ որ օտար մարդկանց հետ մինակ կենցաղավարի, կամ տգէտ մարդիկներէ սխալ ձամբաներ երթալու խրատուի : Այսոնք ըսելէն եաքը հարցուցի խաթունին թէ հիմայ տղադ ուր գնաց :

Խաթունը պատասխանեց, թէ պարտէզ գնաց, հոն երբեմն մինակ, և երբեմն ալ վարը վարձուոր ունինք, անոնց տղոցը հետ կը խաղայ :

— Գիտես, տղոց հետ ինչ կը խաղայ, ինչ կ'ընէ :

— Խար տարուան տղայ մը ինչ պիտի ընէ . իր հասակին յարմար տղայական զեօսանք է ըրածը :

— Ո՞եկ կ'ըսես, տասը տարուան տղուն իր հասակին յարմար խաղեր է խաղածը . ըսելկ'ուզէս թէ պղտիկ ըւլալով քու սիրտդ ծակող, սիրտ խշխըշցնող վնասակար բաներ չի կրնալ ընել . բայց կը կարծես թէ տղադ միշտ տասը տարուան պիտի մնայ . չես մտածեր որ օրէ օր տարիքը կը մեծնայ, իր կիրքերն ալ, ախտերն ալ մէկտեղ կը մեծնան : Խար տարուանը ինչ պիտի ընէ կ'ըսես, ու չես մտածեր որ այսպէս ինքիր գըլխուն մեծնալով երբոր տասնըհինգ, քըլսան տարուան ըլլայ, ինչե՞ր պիտի ընէ, քեզի ախ վախ ընել պիտի տայ . ասոր քարակ խելք պէտք չէ . յայտնի կ'երեւայ որ հասակին հետ ամէն սովորութիւնները մէկտեղ կը մեծնան : Հիմակուան անոր ըրած անկարգութիւնները զի զուարձալի կ'երեւան . բայց ետքը սիրտդ պիտի խոցեն : Երբ մէկ ասիւծի կորիւն մը տունդ մեծցընես, քանի որ կորիւն է պղտիկ, իր առիւծ ըլլալը քեզի ցուցընելով կը ջանայ զքեղ

մագլցել, խածիսրտել. և դու տեսնելով
անոր աշխուժութիւնը և տկարութիւ-
նը վրան կը ծիծաղիս, կը զուարձանաս .
բայց երբ թողուս որ մեծնայ , ու թո-
ղուս որ առջինին պէս քովդ մօտենայ ,
յայտնի է որ այն գարձեալնոյն առիւծն
է, պղտիկուց ըրածէն աւելի ուրիշ բան
ըներ քեզի , բայց դու զուարձանալու
տեղիր Ճիրաններուն կը մատնուիս , կը
պատրուտիս : Այս է ահա տղուդ ընե-
լիքն ալ , ամեննեին մի տարակուսիր :
Ուարդուս կըքերն ու ախտերը առիւ-
ծին Ճիրաններէն ու ակրաններէն ալ
գէշ են . փորձ չեղող մարդկանց առջեւ ,
քանի որ պղտիկ են անանկ կերպերով
կը բանեցընեն իրենց անկիրթ կըքերը ,
որ զուարձութիւն կը պատճառեն . և
ծնողք տղուն մոլութեանց Ճիրանները
և կըքերուն ակրանները փրցընելու , ար-
մատէն քակելու տեղ , ախորժելի բան
մը կարծելով կ'ուրախանան անոնց վրայ
ու կը թողուն որ աձին . ետքը իրենք
տղուն հետ մէկ տեղ չարաչար վնասը
կը կրեն , Ճար Ճարակ չի կրնալով ընե-
լու :

— Բայց քանի որ տղայ է ինչ կրնաս
ընել . շատ նեղը խոթելու ըլլամ , կը
վախեմոր կը հիւընդնայ , բան մը կ'ըլ-
լոյ :

— Ես չեմ ըսեր թէ տեղ մը դնես
վրան գոցես . այլ մինակ մի թողուր ,
ամէն ուղաճը մի ըներ . իրեն ախորժե-
լի բաներ ըրե , բայց իր չի կարծած չու-
ղած ատեն . մէկ խօսքով՝ ամէն կըթու-
թեան հնարքները վրան բանեցուր :

Պարոնը այս խօսքերս լսելով պատաս-
խան տուաւ . Ես իմ տղաքս իրենց չա-
փին մէջ կը պահեմ , դրսէն մարդու
հետ չեմ թողուր որ ընտանենան , և
իրենցմէ մեծերուն առջեւ լրել ու մտիկ
ընել կը սովորեցընեմ . համարձակութի
չեմ տար , նաև իմ առջես ալ թող չեմ
տար որ բերաններնուն եկածը խօսին .
և խիստ գոհ եմ իրենցմէ , գառն կը
նմանին :

— Այդ քու ըրածդ ալ կը նմանի
այն առիւծուն , որ Ճիրաններով ակրա-
ներով պատրուտել , խածնել չի սովորի

ըսելով՝ ոտուըները , բերանը կապես ու
անանկ մեծցընես . իրաւ է , քանի որ
կապած կը պահես , վեաս մը ըներ .
բայց որ կու գայ որ ուղես չուզես պիտի
կապերը քակես , ըսելով թէ պատրուտել
խածնել չի գիտեր . շատ կը խաթուիս .
վասն զի պատուտել , խածնելը իր բնու-
թեան մէջը կայ , այն առիւծը քակուա-
ծին պէս ամէն բանէ առաջ զքեզ կը
պատրուտէ : Այսպէս գոց մեծցած տը-
զաք վերջը ալ գէշ կ'ըլլան . այդ ալ շի-
տակ Ճամբայ չէ . Հապա պէտք է որ մար-
դու հետ տեսնուի , ընկերութիւններու-
մէջ երեւնայ , երկու խօսք խօսիլ սովորե-
ցընես , բայց միշտ խօսածնին , վար-
մունքնին դիտելով և անուշութեամբ
խրատելով . մանաւանդ մինակ եղած
ատեննին քու առջեւդ պէտք է որ հա-
մարձակութիւն տաս խօսելու , խաղա-
լու , զուարթանալու . դու ալ երբեմն
հետերնին իբրև եղայր վարուիս , և
միշտ դիտելով ու սխալնին անուշու-
թեամբ խրատելով : Ա ասն զի հայր
մայրը ըսածդ՝ տղոց հետ պէտք է որ վա-
րուին զիրենք խնամելու , անոնց պէտքը
հոգալու ատեն իբրև գթալից ծնող սի-
րելով զիրենք : Եւ երբեմն պակսու-
թիւննին զսպել արդար դատաւորի պէտք՝
աղէկ ընողը վարձատրելով և գէշ ընո-
ղը պատժելով , երբեմն ալ իբրև իրենց-
մէ մէկը հետերնին խօսելով խնտալով ,
բայց միշտ իր ծանրութիւնը պահէլով :
Երբեմն ալ իբրև ուսուցիչ յորդորելով
ու զիտցածնին սովորեցընելով . և միշտ
հպարտութեամբ կամակորութիւն ը-
նողներուն՝ նոյն միջոցին իբրև թշնամի
երենալով , արհամարհելով հպարտու-
թիւնը և կամակորութիւնը :

Դնողք սովորաբար կարծեն թէ,
տղայ ունենալս ու ցրտէն տաքէն , վնա-
սակար կերակուրներէն , մարմնոյ հի-
ւանդութիւններէն զգուշացընելն ու
մեծցընելը՝ գժուար բան է : Բայց եթէ
աղէկ մտածեն , և ուղեն Ճշմարիտ և
կատարեալ ծնողութիւն ընել , կիսա-
նան թէ մարմնով մեծցընելը , որ գը-
ժուար է կ'ըսեն , խիստ դիւրին է . այլ
խիստ գժուարն է կրթութիւն տալն՝

ու բանաւոր քրիստոնեայ մեծցընելը :

Այս խօսքերուս վրայ պարոնն ու խաթունը մէկտեղ սկսան աղաչելինձի , թէ իրենք ինչպէս ընեն , որ չեն գիտ ցած շիտակ ձամբան , ու իրենց կարծածնուն պէս մեծցուցեր են . և սկսան ինձ մէ ինդրել որ ես ձար մը ընեմոր աղէկ կրթութեան ձամբուն մէջ մտնեն տր զաքնին . և կ'ըսէին թէ կարելի է յանձն առնում ասոնց վարժապետութիւն ընելու : Ես ալ մտածեցի որ ես արդէն ապրուստի համար մէկ գործոյ մը հետ պիտի ըլլամ . այս ալ աղէկ՝ որ ես կեանքս

աւելի օգտութեամբ անցուցած կ'ըլլամ , ազգերնուս մէջ ես ալ քանի մը տղոց առաքինութեան ձամբուն մէջ մեծնալու պատճառ կ'ըլլամ : Ուստի սիրով յանձն առի ու սկսայ այս տղոց կրթութեանը պարապիլ : Եւ թէ ինչպէս սկսայ , և ինչ ձամբով առաջ տարի երբեմն երբեմն թէ որ պարապ միջոց մը ունենալու ըլլամ , կը գրեմ , յուսալով որ ուրիշներուն ալ օգտակար կրնայ ըլլալ :

Հ . Պ . Մ

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ա.Ռ.Ա.ՆԶ Ա.Ր

ՍԵՊՈՒՀ ԱՄԱՏՈՒՆԻ

ՀԱՅՈՑ ԳՆԴԻՒՆ ՀԵՖԵԼԱՊԵՏ

ԶԻԱՏՈՐԵԱԼ ԵՐԹԱՅԻՆ Հայք 'ի հանդէս
Ի բուռն առեալ պիրկ դանդանաւանդ ,
ՎՇ ընթանայր 'ի գունդ Պարսից սեւատես .
Դողայր թընդայր Հեր եւ Օարաւանդ :

Պիշ պիշ մանկտի , ընդ ձանապարհ բըլերդ այդ պիշ .
Տեսանիցէք ամպ վերացեալ յերկրէ 'ի յայդ նիշ :

Լին արեւուս շեշտ կըշիռ
Ըզմիջօրեաւ գայ 'ի հիռ .
Լողերք մայրեաց լայնասաղարթ
Լան ձապաղեալք զերկրաւ հանդարտ .
Ու է հնչիւն զովոց հողմոց
Ու է խօշիւն տերեւակոծ .

Եւ սուրալով ընդ ամայիս պողոտայ
Փոշի անհողմ բարդ 'ի բարդին վերանայ :
Դիք գուք , մանկտի , միտ դիք , լսէք գափի եւ թընդիւն ,
Ոդապարից երիվարաց փոխնչ եւ դոփիւն .
Զիաւորեալ երթային Հայք 'ի հանդէս
Ի բուռն առեալ պիրկ դանդանաւանդ .
ՎՇ ընթանայր 'ի գունդ Պարսից սեւատես .
Դողայր թընդայր Հեր եւ Օարաւանդ :

Արպէս յաղըերց հեռաւորաց
Հառաջաձայն սահանք ալեաց ,